դատարանի գրեալ 'ի վերայ մաղաղաթի, սակայն այժմ տեղին է անյայտ (1349)։

Ի կենդանութեան Վասլի եպիսկոպոսի Գաբրիէլ վարդապետ ոմն, որ թուի լինել փոխանորդ Պատրիարքին, սկիզբն արար շինել և նորոգել զվանքն Ս. Փրկչի արտաքոյ քաղաքին Երուսաղէմի մերձ 'ի վանս Սիոնի. զի յերեսաց արշաւանաց և ասպատակութեանցն այլազգեաց քանդեալ և աւերեալ էր. զի թէպէտ եղեն ձեռնամուխ երբեմն շինել և նորոգել զայն, սակայն այլազգիք տեղւոյն խափանեցին, որպէս ունիմք յառաջ բերել 'ի դատաստանական գրոց։ Տեսեալ զայն մեծամեծացն այլազգեաց, մանաւանդ մոլեռանդ դիւանականաց, խռովեցին զքաղաքն և արարեալ ամբոխ մեծ, դիմեցին յատեան դատաւորին. խուժանն աղաղակէր թէ՝ վանքն Հայոց, որ կոչի [illegible] [illegible], է չար և վնասակար տեղի հայհոյութեան և հակառակ օրինաց մերոց։ Եւ զի յառաջ քան զայս ٧٠٥ (1305) բերին հրաման Հայք 'ի Մէլիք Մանսուր Հիսամ էտտին Սալահիէն վասն շինութեան եկեղեցւոյն այնորիկ, այլ յայնժամ ոմանք 'ի բնակչաց քաղաքիս գնացին յեգիպտոս, և ամբաստան լեալ զնմանէ յայտ արարին զվնասակարութիւն նորին, և Սուլթանն առաքեաց քննիչս, և նոքա ծանուցին նմա թէ՝ է վնասակար յոյժ, և իբրև ամուր ապաստանի 'ի ձեռս քրիստոնէից. և Մէլիք Մանսուր հրովարտակաւ հրամայեաց քակել զվանքն եւ թողուլ զայն յառաջին աւերակ վիճակի. որպէս և էր 'ի ժամանակի յաղթութեան, և անիծիւք արգել զնա. « Անէծք Աստուծոյ և մարգարէի նորին եղիցի 'ի վերայ այնորիկ, որ տայ հրաման, կամ օգնեսցէ և կամ խնամ տարցի 'ի շինել և 'ի դարձուցանել զայն 'ի վիճակն առաջին, և եղիցին նմա ոսոխք և թշնամիք Աստուած և մարգարէ նորին, և յաւուրն դատաստանի ընդ չարագործս և ընդ ամբարիշտս համարեսցի. և յաւուրն յորում ասէ Աստուած ցԳեհէնն, թէ լցա՞ր, տացէ պատասխանի՝ տակաւին ոչ »։

Իբրև լուաւ դատաւորն զամբաստանութիւնս նոցա, եւ ընթերցաւ զՀրովարտակն զոր մատուցին առ նա, ետ կոչել զփոխանորդն Հայոց զԳաբրիէլ, և հրամայեաց նմա երթալ եւ քակել, զոր միանգամ շինեալ էր եւ թողուլ